FASTBANK

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ֆասթ Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) ծառայություններից օգտվելու նպատակով տալիս եմ իմ համաձայնությունն առ այն, որ.

Վարկեր տրամադրելու և/կամ դրամական պարտավորություն առաջացնող ծառայություններ մատուցելու/մատուցելու առաջարկով հանդես գալու նպատակով Բանկն առանց ինձ նախապես տեղյակ պահելու «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ից և «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն հիմնադրամից կատարի հարցումներ և ստանա իմ վարկային պատմության և/կամ ֆինանսական պարտավորությունների, իմ աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև այլ տվյալներ:

Տալիս եմ իմ համաձայնությունն առ այն, որ վերոնշյալ հարցումները կատարվեն ստորև նշված նպատակներով և ժամկետներով՝

- ☑ Վարկի հայտի ուսումնասիրության ընթացքում՝ նոր վարկի տրամադրման նպատակով, որը կարող է բացասական ազդեցություն ունենալ իմ վարկային սքորի վրա,*
- ☑ Գործող վարկի գործողության ընթացքում՝ վարկի մոնիտորինգի նպատակով, որն իմ վարկային սքորի վրա ազդեցություն չունի,*
- ☑ Ծառայությունների, հատուկ առաջարկների և առաջարկվող ծառայությունների տրամադրման վերաբերյալ որոշումներ կայացնելու նպատակով, որը գործում է վարկային պայմանագրի ողջ ընթացքում:**

***Տեղեկացված եմ, որ նշված դեպքերում համաձայնությունից հրաժարվել չեմ կարող, քանի որ այն հանդիսանում է վարկավորման պարտադիր պայման և գործում է վարկային պայմանագրի ողջ ընթացքում:**

*** Տեղեկացված եմ, որ այս նպատակով հարցումն իմ վարկային սքորի վրա ազդեցություն չունի, ուստի կարող եմ հրաժարվել ցանկացած պահի՝ ներկայացնելով հրաժարման հայտ:***

Գիտակցում եմ, որ սույն համաձայնության շրջանակներում իմ վերաբերյալ տրամադրված տեղեկությունները և տվյալները, կախված դրանց բովանդակությունից, կարող են ազդել ինձ ծառայություններ մատուցելու՝ վարկի/կրեդիտի կամ այլ ֆինանսավորման հետ կապված Բանկի կողմից կայացվող և կայացված համապատասխան որոշումների վրա:

Սույնով տալիս եմ իմ համաձայնությունը, որ սույն համաձայնությունը թվային տիրույթում հաստատելու դեպքում համաձայնությանն առնչվող տեղեկատվությունը Բանկի կողմից ինձ տրամադրվի թվային տիրույթում առկա հավելվածում՝ իմ կողմից նշված էլեկտրոնային հասցեի միջոցով:

Սույնով հայտնում եմ, որ Բանկի կողմից բանավոր կարգով բացատրվել է վարկային սքոր գնահատականի էության և դրա կարևորության, կիրառվող սքորի տեսակի, սքորի վրա ազդող հիմնական գործոնների վերաբերյալ տեղեկատվությունը, միաժամանակ հայտնում եմ, որ տեղեկացված եմ սքոր գնահատականի վրա վարկային հարցման ազդեցության վերաբերյալ:

Սույն համաձայնությունը կարդացել եմ և հավաստում եմ, որ այն ինձ համար ամբողջությամբ հասկանալի և ընդունելի է: